

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿՈՂ ՀԱՅԵՐԵՆ ԲԱՅԵՐԸ*

Բանալի բառեր - ինքնություն, ինքնության փոփոխություն, ազգային ինքնության փոփոխություն, վերածման բայեր, հայանալ, թուրքանալ, ռուսանալ, դիպվածային բառեր, կրոնական ինքնության փոփոխություն նշանակող բայեր, քրիստոնեանալ, կաթոլիկանալ, իսլամանալ:

Մուտք

Քերթողահայրը գրել է. «... զազգիս մերոյ կարգել զպատմութիւնն ճշդի՝ զթագաւորացն և զնախարարականաց ազգաց և տոհմից, թէ ով յումմէ, և զինչ իւրաքանչիւր ոք ի նոցանէ գործեաց, և ո՛վ ոք ի ցեղիցս որոշելոց ընտանի և մերազնեայ, և ո՛յք ոմանք եկք ընտանեցեայք և **մերազնացեայք**»¹: Հատվածը աշխարհաբարի է վերածվել այսպես. «... ճշտությամբ հորինել մեր ազգի պատմությունը, թագավորների և նախարարական ցեղերի և տոհմերի մասին, թե ո՛վ ումից է ծագել, ինչ է գործել նրանցից յուրաքանչյուրը, և ո՛րն այս բաժանված ցեղերից բնիկ մեր ազգից է և որոնք եկվորներ են և **հայացել**՝ բնիկ են դարձել»²:

Ըստ այս հատվածի՝ հայկական թագավորական և նախարարական որոշ տներ ծագումով օտար են եղել, բայց տևական ժամանակի ընթացքում ձուլվել են հայերին (**մերազնացեալ** նշանակում է «ի մերազն վերածեալ. ի համարի ազգիս մերոյ գտեալ»³, այսինքն՝ «հայ դարձած, հայացած»): Արդի լեզվամտածողությամբ՝ խոսքն ազգային ինքնության փոփոխության մասին է:

* Հղվածն ընդունվել է տպագրության 29.11.2019:

- 1 **Մովսես Խորենացի**, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածությունը **Ս. Աբղեանի** եւ **Ս. Յարութիւնեանի**, Եր., 1991, էջ 12:
- 2 **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները **Ստ. Մալխասյանցի**, հրատարակության է պատրաստել **Գ. Գ. Անանյանը**, Եր., 1981, էջ 13: Պատմաճոր գրքի արևելահայերեն մեկ այլ հրատարակության մեջ **հայացել** չէ, այլ **հայացած** (տես **Մովսես Խորենացի**, Պատմություն Հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները ակադեմիկոս **Ստ. Մալխասյանցի**, թարգմանությունը բնագրի հետ համեմատեցին ու խմբագրեցին **Վ. Դ. Առաքելյանը** և **Ա. Ա. Աբրահամյանը**, Եր., 1968, էջ 71):
- 3 Տես **հ. Գաբրիէլ Աւետիքեան**, **հ. Խաչատուր Միրմէլեան**, **հ. Մկրտիչ Ազեղեան**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հատ. Բ, Վենետիկ, 1837, էջ 253 (այսուհետև՝ ՆՀԲ):

Իսկ ի՞նչ է ազգային ինքնությունն առհասարակ: Ազգի կամ ազգային ինքնությունը կարելի է սահմանել որպես պատմական, մշակութային կամ հոգեբանական գործոնների գումարման և համադրման արդյունք⁴: Ինքնության հասկացությունը կարելի է բնորոշել իբրև հակաբևեռը այլության⁵: Ինքնությունն ընկալվում է ուրիշի, այլի, օտարի հետ հարաբերվելու միջոցով. «մենք»-ի ընկալման անհրաժեշտ տարրերից են «նրանք»-ը կամ «ուրիշ»-ը, ըստ այդմ էլ սերտորեն առնչվում են մի կողմից՝ նույնության և ուրիշության կամ այլության, մյուս կողմից՝ ինքնության խնդիրները: «Այլ», «ուրիշ» և «օտար» հասկացությունները հարիմաստ են, սակայն դրանց միջև այլության որոշակի տարբերակում կա: «Այլ»-ը կարող է անգամ սեփական անձի այլը լինել կամ հանդես գալ որպես ինքնափոխակերպման մի տարր, որ ամենամոտն է նույնությանը: «Ուրիշ»-ը նկատելիորեն սահմանազատված է. այն կարող է ձգտել ընդունման և հարազատացման, սակայն լիովին չնույնանալ: Իսկ «օտար»-ն այն ուրիշն է, որին մերձենալու, այն ընդունելու մղում չկա, ընդհակառակը՝ հստակ սահմանազատում կա, նույնիսկ պաշտպանվելու դիրքորոշում, իսկ երբեմն էլ՝ ուղղակի մերժում⁶:

Ընդունելի է այն տեսակետը, որ «ինքնութիւնը մէկ անգամ ընդմիշտ տրուած, իրագործուած, սպառած եւ լրացած, կատարեալ իրողութիւն մը չէ, այլ ենթակայ է յարատեւ զարգացման, յեղաշրջումի, յետ եւ յառաջընթացներու, բարուքման ու կատարելագործման»⁷:

Մարդկության պատմությանը հայտնի են դեպքեր, երբ կամովին կամ բռնությամբ, զանգվածաբար կամ անհատապես տեղի է ունեցել ազգային ինքնության փոփոխություն, անցում այլ ինքնության:

Հայոց պատմությունից էլ բազում այդպիսի դեպքեր կարելի է հիշատակել: Դիտարկենք լեհահայերի օրինակը: XVII դարի առաջին կեսին Լեհաստանում կաթոլիկ եկեղեցին կատաղի գրոհ սկսեց հայ եկեղեցու դեմ՝ այդ պայքարում օգտագործելով հայ բարձրաստիճան հոգևորականների: Մեծ կաշառքով լեհահայոց թեմի առաջնորդ նշանակվեց 23-ամյա նորաթուփ եպիսկոպոս Նիկոլ Թորոսովիչը, որն ամեն կերպ ջլատեց համայնքը, թուլացրեց և քայքայեց եկեղեցին: Ազգադավ այդ մարդու մահից հետո Լվովի հայ եկեղեցու առաջնորդ ձեռնադրվեց Վարդան Հունանյանը, որը 1689 թ. հոկտեմբերի 10-ին պապական նվիրակի նախագահությամբ հրավիրեց լեհահայ եկեղեցու ժողով, որտեղ Լեհաստանի և Արևմտյան Ուկրաինա-

4 Տե՛ս Աբրահամյան Լ. Հ., Ազգային ինքնության հաստատման չորս հարացույցները, «Ինքնության հարցեր: Տարեգիրք», Եր., 2002, էջ 43:

5 Տե՛ս Ջեքեան Պողոս Լեոն, Հայ ինքնութիւն, «Ինքնության հարցեր: Տարեգիրք», Եր., 2002, էջ 33:

6 Հմմտ. Պետրոսյան Ս. Ս., «Մենք»-ի ինքնանույնության կառուցման որոշ տարրերի փիլիսոփայական վերլուծության փորձ, «Հայոց ինքնության հարցեր», պրակ 2, Եր., 2014, էջ 44, 46:

7 Հայր Լեոն Ջեքեան, Ինքնութեան խճանկար, Պէյրուք, 2001, էջ 34:

Արդեն հիշատակված **-անալ** (-ենալ) ածանցն ունեցող բայերը չեզոք են¹¹, ա- նանցողական¹², բացի մի քանիսից (**գողանալ**, **ստանալ**, **իմանալ**, **ցանկանալ**), և ցույց են տալիս մի բան դառնալը, մի վիճակից մի ուրիշ վիճակի փոխվելը, ինչպես՝ **փայտանալ**, **քարանալ**, **դառնանալ**, **լավանալ**¹³: Մեծաթիվ այդ բայե- րը¹⁴ կոչել են տարբեր անուններով, նախ՝ «վերածման կամ փոխարկման բա- յեր»¹⁵, ապա՝ «վերածության-դառնալիության բայեր»¹⁶, նաև «փոխարկային»¹⁷: Ուշադրություն դարձնենք, որ **վերածություն** բառի իմաստն ակադեմիական բա- ցատրական բառարանն այսպես է ձևակերպում՝ «մի բան մի այլ բանի վերածե- րը՝ փոխարկելը»¹⁸, և համեմատենք հետազոտվող բայերի անվանումների հետ:

Տարբեր խոսքի մասերից **-ան-** ածանցով կազմված և վերածման իմաստ ու- նեցող բայերը (**ազնվանալ** - ազնիվ դառնալ, **ագահանալ** - ագահ դառնալ, **բա- րեկամանալ** - բարեկամ դառնալ, մտերմանալ, խնամիական կապով ազգական դառնալ և այլն) չունեն սկզբնատիպ զուգահեռներ, ընդ որում, «վերածման գա- դափարի արտահայտման մեջ **-ան-** ածանցի դերը տվյալ դեպքում շատ ցայտուն է»¹⁹: Նկատվել է, որ «**-ան-** ածանցը մի բանից մի բանի վերածվելու, մի բա- նից մի բանի փոխվելու, մի բան դառնալու իմաստ է արտահայտում և ըստ այդմ էլ **վերածելիության** կամ **դառնալիության կերպի ածանց** է կոչվում»²⁰ (ընդ- գծումը հեղինակին է-Դ.Գ.):

Ածականներից **-անա(լ)** ածանցով կազմված բայերն ունեն նախատիպ ածա- կանի հատկանիշով օժտվելու, այդ հատկանիշին վերածվելու, փոխարկվելու բառակազմական նշանակություն, իսկ գոյականներից կազմված բայերն ունեն հետևյալ բառակազմական նշանակությունները՝ 1. նախատիպի ցույց տված ա- ռարկան դառնալ, նրան վերածվել, 2. նախատիպի ցույց տված առարկայի հատ- կանիշը ստանալ (նաև փոխաբերական առումով)²¹:

11 Չեզոք են այն բայերը, որոնք ուղիղ խնդիր չեն առնում, **-վ-** ածանց ստանալ չեն կարող (հմմտ. **Հարությունյան Հ. Ա.**, Կառավարումը ժամանակակից հայերենում, Եր., 1983, էջ 146):

12 **Ան/աց-**ը դիտվում է որպես անանցողականության տարբերիչ, և «անցողականությունը կարելի է մեկնաբանել որպես գործողայնություն (գործողության միջի առկայություն), անանցողականությունը կամ ներակայությունը՝ որպես վիճակայնություն» (տես **Ջահուկյան Գ. Բ.**, ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 260):

13 Տես **Աբրեյան Ս.**, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 288:

14 Ըստ Հ. Բարսեղյանի կազմած բայացանկի՝ **-անալ** ածանցով մոտ 700 բայ է կազմվել (տես **Ասատրյան Մ. Ե.**, ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հատ. Բ, Եր., 1973, էջ 220. հեղինակը մի բանի վերածվելը, մի բան դառնալը ցույց տվող բայերի մեջ հիշատակում է **ռուսանալ-ը**, **օտարանալ-ը**, որոնք մեզ հետաքրքրող բառահմաստային խմբի միավորներ են):

15 Տես **Առաքելյան Վ. Դ.**, ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Եր., 1957, էջ 100:

16 Տես **Աղայան Է. Բ.**, ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը (կառուցվածքային վերլուծություն), Եր., 1967, էջ 331:

17 Տես **Ջահուկյան Գ. Բ.**, նշվ. աշխ., էջ 466:

18 Տես «ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հատ. 4, Եր., 1980, էջ 392:

19 Տես **Արբահանյան Ա. Ա.**, Բայը ժամանակակից հայերենում, գիրք 1, Եր., 1962, էջ 216-217:

20 Տես **Սարգսյան Ա. Ս.**, Հայոց լեզվի քերականություն, Ձևաբանություն, Եր., 2004, էջ 366: Մեր կարծիքով այս- տեղ գործ ունենք ոչ թե կերպի, այլ բառակազմական նշանակության հետ:

21 Տես **Գալստյան Ս. Ա.**, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Եր., 1978, էջ 245:

Գործառական տեսակետից -**անալ** ածանցն ունի որոշ սահմանափակություն. նրանով կազմվում են միայն չեզոք սեռի բայեր..., որոնք բնորոշվում են դառնալու, վերածվելու, հատկանիշ ձեռք բերելու իմաստոյթով, իսկ գործողության կերպի առումով մտնում են, այսպես կոչված, անցումային (ինգրեսիվ, ինխատիվ) կերպի մեջ²²:

2. Ազգային ինքնության փոփոխության նշանակիչ բայերը

Ազգային ինքնության փոփոխության նշանակիչ բայերի իմաստն այժմյան դիտանկյունից ընդհանուր ձևով արտահայտված է **օտարանալ** բայի մեջ: Գրաբարում այն նշանակել է «օտար լինել. հեռանալ, պանդխտանալ», «անձանոթ լինել կամ ձևանալ»²³, որն էպես տարբերվում է ժամանակակից ընկալումներից: Հետևենք բառիմաստի փոփոխությանը:

Եթե Ստ. Մալխասյանցի բառարանում **օտարանալ** բայի իմաստը ձևակերպվել է «օտար դառնալ, իր բնիկ վիճակից ուրիշ վիճակի փոխվել»²⁴, ապա ակադեմիական բացատրական բառարանում բառն առաջին իմաստով նշանակում է «իր ազգային հատկանիշները՝ զգացումները կորցնել և օտար դառնալ»²⁵: Հաստուկ անդրադարձ է կատարվել ազգային հատկանիշները կամ զգացումները կորցնելու հանգամանքին: Օտարանալը սեփական ազգի հատկանիշները կորցնելու ընթացքի մի աստիճանն է, դրա վերջնական արդյունքը՝ այլ ազգի ներկայացուցչի վերածվելը կամ այլազգի դառնալը:

Հայերենում կան բայեր, որոնք արտահայտում են «այսինչ ազգի ներկայացուցիչ դառնալ», ինչպես նաև երբեմն սրան ներհյուսված (կամ առանձնաբար հանդես եկող) «այսինչ կրոնի՝ դավանանքի հետևորդ դառնալ» իմաստները: Այս իմաստներն արտահայտող բայեր վկայվել են գրաբարյան շրջանից:

3. Բառարաններում գրանցված բայերը

Նոր հայկազյան բառարանում արձանագրված են «ազգի անուն+ան+ալ» կառուցվածք ունեցող երեք բայեր՝ **հրէանամ** «հրէայ լինել, իբրեւ հրէայ վարիլ. դառնալ ի հրէութիւն կամ հրէարէն վարիլ»²⁶, **պարթևանամ** «իբրու պարթև լինել լեզուաւ»²⁷ և **պարսկանամ** «իբրեւ պարսիկ լինել, որպէս պարսիկ բարբառել»՝ բնագրային օրի-

²² Տես Հովսեփյան Լ. Ա., նշվ. աշխ., էջ 301:

²³ ՆՀԲ, հատ. Բ, էջ 1029: Գրաբարում կա նաև **այլանալ** բայը (ՆՀԲ, հատ. Ա, Վեներիկ, 1836, էջ 87), որն ուրիշ իմաստ ունի և հետաքրքրական է բառակազմական հիմքի տեսանկյունից:

²⁴ **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան, հատ. 4, Եր., 1945, էջ 611:

²⁵ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հատ. 4, էջ 791:

²⁶ Ըստ Ստ. Մալխասյանցի բառարանի՝ «հրէայ դառնալ, հրէական դաւանութիւն ընդունել» (Հայերէն բացատրական բառարան, հատ. 3, Եր., 1944, էջ 152), ըստ ակադեմիական բացատրականի՝ «հրէա դառնալ» (հատ. 3, Եր., 1974, էջ 395):

²⁷ Ըստ Ստ. Մալխասյանցի բառարանի՝ «պարթեւ դառնալ, իբրեւ պարթեւ խօսել, պարթեւ» (հատ. 4, էջ 83): Է. Աղայանի բացատրական բառարանը **պարթևանալ** բառը բացատրում է այսպես՝ «պարթև դառնալ, պարթևակազմ դառնալ» (Եր., 1976, էջ 1205), որ նշանակում է, թե բառի հիմքում ընկած է **պարթև** «հաղթանդամ, լայնաթիկունք» համանունը:

նակներով (ՆՀԲ, հատ. Բ, էջ 142, 635, 640): Ակներև է, որ այս բայերն արտահայտում են «տվյալ ազգի հատկանիշների կրող դառնալ», «տվյալ ազգի դավանանքն ընդունել», «տվյալ ազգի լեզվով խոսել» իմաստները: Թվարկված բայերը հետագուովող բառափմաստային այս խմբի ամենավաղ կազմություններն են:

Բառախմբի մյուս միավորներն աշխարհաբարյան կազմություններ են: Դրանցից **ռուսանալ**-ը, նրանից կազմված **ռուսացնել**-ը և **ռուսացում**-ը 19-րդ դարավերջին արդեն բառարանային գրանցում էին ստացել²⁸:

Աշխարհաբարյան փուլի միավելվյան և թարգմանական բառարաններն արձանագրել են «այսինչ ազգի ներկայացուցիչ դառնալ» իմաստն արտահայտող հայերեն հետևյալ բայերը՝ **գերմանանալ**, **թուրքանալ**, **իտալանալ**, **լեհանալ**, **հայանալ**, **հրեանալ**, **հունանալ**, **պարթևանալ**, **պարսկանալ**, **ռուսանալ**, **վրացանալ**, **տաճկանալ**, **քրդանալ**²⁹, ընդամենը 13 միավոր: Նկատելի է, որ գրաբարյան շրջանի կազմությունները ևս արտացոլվել են ժամանակակից հայերենի այս կամ այն բառարանում, այսինքն՝ այդ բառերը փոխանցվել են հայերենի զարգացման հետագա փուլերին՝ դառնալով նրա բառապաշարի մասը:

«Այսինչ ազգի ներկայացուցիչ դառնալ» իմաստն արտահայտող բայերը բառարաններում գրանցվել են թե՛ որպես մենիմաստ և թե՛ բազմիմաստ բառեր³⁰, չեզոք սեռի բայեր: Ակադեմիական բացատրական բառարանում, օրինակ, դրանք բացատրվում են այսպես՝ **գերմանանալ** - գերմանացի դառնալ (լեզվով, սովորություններով և այլն) (հատ. 1, էջ 396), **լեհանալ** - լեհ դառնալ, լեհացման ենթարկվել (հատ. 2, էջ 396), **հրեանալ** - հրեա դառնալ (հատ. 3, էջ 395), **քրդանալ** - քուրդ դառնալ (հատ. 4, էջ 752):

Երկու բառի դեպքում, «այսինչ դառնալ» ձևակերպումից բացի, նշվում է տվյալ ազգի լեզուն, կենցաղը, սովորույթները, այլև կրոնն ընդունելը: Այսպես՝ **ռուսանալ** - ռուս դառնալ, լեզվով, բարքերով, կրոնով ձուլվել ռուսների հետ (հատ. 4, էջ 256), **վրացանալ** - վրացի դառնալ, վրացական լեզու՝ բարքեր ընդունել (հատ. 4, էջ 428): Ի դեպ, այս երկու բայերն էլ ունեն տարբերակներ: **Վրացանալ** բայի **վրացիանալ** տարբերակն արձանագրված է ակադեմիական բացատրական բառարանում (հատ. 4, էջ 428), այսինքն՝ ազգության անունը բառի կազմում անփոփոխ է մնում (հմմտ. **վրացիություն**, մնացած դեպքերում բառակազմական հիմքը **վրաց**-ն է՝ **վրացախոս**, **վրացուհի**, **վրացասեր**, **վրացերեն** և այլն): **Ռուսանալ**

²⁸ Տե՛ս **Եղորտեան Կ.**, Հայերէն-ռուսերէն բառարան, Թիֆլիս, 1891, էջ 386:

²⁹ Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հատ. 1-4, Եր., 1969-1980: **Աղյան Է. Բ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, «Հայոց լեզվի հանգաբառարան», **Պ. Պողոսյանի** խմբագրությամբ, Եր., 1976:

³⁰ Հմմտ. «Վերածման բայերը գրաբարում է և ժամանակակից հայերենում հիմնականում բազմիմաստ են, դրանց մի մասն ունի նաև փոխաբերական իմաստ(ներ), մինչդեռ միջին գրական հայերենում հիշյալ բայերի մեջ գերիշխում է առավելապես բուն իմաստը, տվյալ դեպքում՝ վերածման գաղափարը» (տե՛ս **Խաչատրյան Չ., Ազգայնական Ս.**, Վերածման բայերը միջին գրական հայերենում, «Պատմա-բանասիրական հանդես», 2019, N 1, էջ 167):

բայի տարբերակը հնչյունափոխված հիմքով է՝ **ոսանալ**³¹, որն այսօր բնորոշ է միայն խոսակցական-բարբառային հայերենին. գրական հայերենում այժմ այդպիսի տարբերակայնություն գոյություն չունի:

Միայն երեք բայ է ներկայացվել որպես բազմիմաստ: Բառարանը երկու իմաստով է ներկայացնում **հայանալ**-ը՝ «1. Հայ դառնալ (լեզվով, հոգով և սովորություններով), 2. (կրոն.) Հայոց եկեղեցու դավանությունն ընդունելով մկրտվել հայոց եկեղեցում» (հատ. 3, էջ 281): Առաջին իմաստի համար բերվում է բնագրային օրինակ Ստեփանոս Նազարյանցից՝ «Կամիմ ավելի քաջ ծանոթանալ քո ճոխ գանձերին, հոգով **հայանալ**», երկրորդ իմաստից առաջ տրվում է ոճական նշում՝ «կրոնական»:

Երկու իմաստով է տրված **պարսկանալ**-ը՝ «1. պարսիկ դառնալ, պարսկական լեզու՝ կենցաղ ընդունել, 2. պարսկական կրոն ընդունել» (հատ. 4, էջ 194): **Պարսկացնել** պատճառականի բացատրության մեջ, սակայն, իմաստային տարանջատում չի կատարվել՝ «պարսիկ դառնալ, պարսկական լեզու՝ կենցաղ՝ կրոն ընդունել տալ»:

Ուշագրավ են **թուրքանալ** բայի իմաստները: Առաջինը բուն նշանակությունն է՝ «մահմեդական կրոն ընդունելով՝ թուրք դառնալ»: Թուրք(եր)ին բնորոշ հատկությունների հիման վրա ձևավորվել են փոխաբերական իմաստները, ընդ որում բոլորը՝ բացասական: Այսպես՝ «կատաղել, բարկանալ», «անկարեկից դառնալ, անողորմ դառնալ», «յուրայիններին, հարազատներին դավաճանել» (հատ. 2, էջ 256): Բացասական է ընկալվում նաև վերջին՝ վեցերորդ իմաստը՝ «մտածողությամբ՝ գաղափարներով թուրքի նման մտածել», քանի որ հայության ընկալումներում **թուրք** բառը ամենևին դրական չէ. նա վայրագ է, ջարդարար, խավարամոլ, ատելի:

Մի բառարանում նշվում է «շատ տանջվել» իմաստը³², որը թերևս պիտի հասկանալ այսպես՝ «մարդկային դիմագիծը կորցնելու աստիճան տանջվել»:

Ինչպիսի՞ն է պատկերը արևմտահայերենի բառարաններում: Արևմտահայերենի բացատրական երկհատոր բառարանը **թուրքանալ**-ը բացատրում է այսպես՝ «քրիստոնեական հաւատքը ուրանալ, մահմեդական ըլլալ, 2. Սաստիկ բարկանալ, դաժանանալ»³³: Կռանյան վարդապետի բառարանում տրվում է **թրքանալ** (արմատական բաղադրիչը հնչյունափոխված)՝ «այլազգանալ, իսլամանալ» բացատրությամբ³⁴:

Արևմտահայերենի բացատրական երկհատոր նոր բառարանի նույն բառահոդվածում տրվում են բայի հնչյունափոխված և չհնչյունափոխված **թրքանալ /**

³¹ Տե՛ս **Ղադրաշեան Յ.**, Լիակատար բառարան հայերէնից ռուսերէն, Թիֆլիս, 1911, էջ 613: Այստեղ բայը **ոսարանութիւն** գլխաբառի ներքո տրված բառափնջի մեջ է:
³² Է. Աղայանի բառարանն այս իմաստը չունի:
³³ **Պետրոս վրդ. Ճիզմէճեան**, Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հատ. 2, Հալեպ, 1957, էջ 415:
³⁴ Տե՛ս **Անդրանիկ վրդ. Կռանեան**, Բառգիրք հայերէն լեզուի, Պէյրուս, 1970, էջ 148: Բառարանագիրը 1998-ի հրատարակության մեջ գրել է «թուրք դառնալ» (տե՛ս էջ 145):

թուրքանալ³⁵ տարբերակները և իմաստները՝ 1. թուրք դառնալ, թրքութիւնը ընդունիլ՝ յօժար կամքով կամ բռնի, տաճկանալ, 2. (փխբ.) թրքութիւնը բռնել, գազանանալ, վայրենանալ, 3. մահմեդական դառնալ (նեղ իմաստով)³⁶:

Ուշագրավ է, որ թուրքանալը մեկնաբանվում է որպէս հոժարակամ կամ բռնի գործողություն, ընթացք: Հարկ ենք համարում հատուկ նշել, որ ազգային ինքնության փոփոխություն նշանակող ոչ մի բայի պարագայում բռնության պահին որևէ բառարանում անդրադարձ չի կատարվում:

Արևմտահայերեն բառարանում իբրև չորրորդ իմաստ նշվում է մի բան, որ համանունական է («թրիք՝ քաք դառնալ»)³⁷ և այս բառահոդվածում չպիտի լիներ: Թեև մյուս կողմից էլ թվում է, թե **թրքանալ**-ի այս բացատրությունն այդտեղ դնելը կարող է արտալեզվական հոգեբանական գործոնի և անհատական ենթակայական ընկալման հետևանք լինել:

Քննարկվող բայերից միայն **թուրքանալ**-ն է տեղ գտել հայերենի հաճախակա-նության բառարանում, այն էլ 2-1 հաճախականություն ունեցող բառերի ցանկում³⁸:

Թուրքանալ-ն ունի նաև բառային տարբերակ՝ **տաճկանալ**: Բառակազմական հիմքը՝ **տաճիկ**-ը, բազմիմաստ է՝ «արաբական մի ցեղի անուն», «մահմեդական», «օսմանցի թուրք»: Վերջին երկու իմաստները հանդես են գալիս միջին հայերենի շրջանում կազմված **տաճկանալ** բայի մեջ՝ «մահմեդականություն ընդունել, հավատափոխ լինել, թուրքանալ»³⁹: Ակադեմիական բացատրական բառարանը ներկայացնում է իմաստային ավելի լայն շրջանակ՝ «1. տաճիկ՝ թուրք դառնալ, հավատափոխ լինելով թուրքանալ, 2. (փխբ.) խիստ կատաղել, գազան դառնալ» (հատ. 4, էջ 441):

Հունանալ-ը ակադեմիական բառարանում տրված է **հույնանալ** «հույն դառնալ» (հատ. 3, էջ 399)⁴⁰ ձևով: Սա վրիպակ չէ, քանի որ յ-ով են նաև պատճառականը՝ **հույնացնել** «հույն դարձնել», դրա կրավորականը՝ **հույնացվել**, բայանուն գոյականը՝ **հույնացում** «հույն դարձնելը, հույնացնելը»:

Հիշատակված բայերից **-ում** վերջածանցով կազմվել են բայանուն գոյականներ⁴¹, ինչպես՝ **թուրքացում**, **տաճկացում**, **ռուսացում**, **պարսկացում**, **հունացում**, **գերմանացում** և այլն, ու արձանագրվել բառարաններում: Սրանց իմաստային ընդգրկումը համանման է: Օրինակ՝ **պարսկացում**. գործողության անունը՝ «պարս-

³⁵ Այդպես է նաև նույնարմատ այլ բառերի պարագայում՝ **թրքահպատակ** – **թուրքահպատակ**, **թրքատէր** – **թուրքատէր**, **թրքատեաց** – **թուրքատեաց** և այլն:

³⁶ **Չնէլ աղբ. Ճէրէճեան, Փ. Կ. Տօնիկեան, Արտ. Տէր Խաչատուրեան**, Հայոց լեզուի նոր բառարան, հատ. 1, Պէյրուք, 1992, էջ 710:

³⁷ Հմմտ. 1. ԹՐԲԱՆԱԼ – թրիք, աղբ դառնալ, 2. ԹՐԲԱՆԱԼ – 1. Թուրքանալ, թրքի կրոն ընդունել, 2. (մման.) կատաղել, սաստիկ գայրանալ (տես **Ղևորդան Ե.**, ժամանակակից հայոց լեզվի համանունների բառարան, Եր., 1978, էջ 118):

³⁸ Տես **Ղազարյան Բ. Ա.**, ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարան, Եր., 1982, էջ 271:

³⁹ **Ղազարյան Ռ. Ա., Ավետիսյան Հ. Մ.**, Միջին հայերենի բառարան, հատ. Բ, Եր., 1992, էջ 374:

⁴⁰ Է. Աղայանի բառարանում **հունանալ** է (էջ 910):

⁴¹ **-Ում**-ը գործողության անուն բայանուն կերտող ամենաարտադրողական ածանցն է (տես **Մաքսուդյան Լ. Ա.**, Բայանուն գոյականը ժամանակակից հայերենում, Եր., 1984, էջ 23):

կանալը», դրա պատճառականը՝ «պարսկացնելը», պատճառականի կրավորականը՝ «պարսկացվելը»: Այդպես էլ՝ **ռուսացում** «ռուսանալը, ռուսացնելը, ռուսացվելը» և այլն:

Միալեզվյան բառարաններում արձանագրված **իտալանալ** բառույթ չկա, սակայն արևմտահայերենի թարգմանական հայտնի մի բառարանում գլխաբառ է դարձել դրա պատճառականի ձևը՝ **իտալացնել** (to italianate)⁴², իսկ նույն բառարանագրի մեկ այլ բառարանի հայերեն մասում նաև հարակատարի **իտալացած** ձևը՝ «աճական» նշումով⁴³:

4. Բառարանային գրանցում չունեցող բայերը

Հայերենի բառարաններում չեն արձանագրվել ազգային ինքնության փոփոխության նշանակիչ մի շարք բայեր՝ **ադրբեջանանալ, ալիհանալ, ամերիկանալ, անգլիանալ, ասորանալ, արաբանալ, բուլղարանալ, թաթարանալ, իսպանացած, հնդկանալ, հունգարանալ, մոնղոլանալ, չերքեզանալ, ռումինանալ, ֆրանսանալ** (15 միավոր), ավելի շատ, քան գրանցվածներն են: Այս բայերի հարացույցի առնվազն մեկ ձևի գործածությունը արևելահայերեն և արևմտահայերեն գրավոր խոսքում փաստված է: Համաբանության օրենքի հիման վրա անշուշտ կարող են կազմվել այս կարգի այլ բայեր ևս:

Ուշագրավ է, որ առավելաբար գործածվել են այդ բայերի հարակատար դերբայի ձևերը: Իսկ ինչո՞ւ հարակատար. որովհետև այս դերբայը «ցույց է տալիս կատարված, ավարտված գործողության կամ եղելության ընդհանուր գաղափար՝ որոշ հետևանքով, իբրև գործողի կամ եղողի ժամանակավոր հատկանիշ»⁴⁴: Քանի որ խոսքաշարում հաճախ անդրադարձ է կատարվում ազգային ինքնության փոփոխությանը՝ որպես ավարտված գործողության, այդ իսկ պատճառով ավելի շատ հանդես է գալիս հարակատարի ձևը: Կարևոր է այն հանգամանքը, որ հարակատար դերբայի միջոցով ցույց է տրվում առարկայի (տվյալ դեպքում անձի կամ հանրության) հատկանիշ: Այս առումով դերբայական այս ձևը՝ որպես վիճակային հատկանիշի արտահայտիչ, հարաբերակցում է աճականին:

Ազգային ինքնության փոփոխություն ցույց տվող բոլոր բայերի խոնարհման հարացույցներն առհասարակ լիակազմ չեն դրսևորվում:

Այսպես, ներկայացնենք բնագրային օրինակներ՝ «Այս հին հայության վերջին երկու-երեք սերունդներու մեծագույն մասը բոլորովին **ռումինացած են** և մեզ համար կորսված» («Էջմիածին», N 7-9, 1948, էջ 68), «1929-59-ին եղել է Տրանսիլվա-

⁴² Տե՛ս **Գույումձեան Մ. Կ.**, Ընդարձակ բառարան հայերենէ անգլիերեն, Պէյրուք, 1950, էջ 257:
⁴³ Տե՛ս **Գույումձեան Մ. Կ.**, Ընդարձակ բառարան անգլիերենէ հայերեն, Պէյրուք, 1961, էջ 730:
⁴⁴ **Արախանյան Ա. Ա.**, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Եր., 1953, էջ 193:

նիայի Ֆրոնդասա (նախկին Սեպվիզ) ավանի **հունգարացած** հայերի հոգևոր առաջնորդը» («Հայկական սովետական հանրագիտարան», հատ. 9, Եր, 1983, էջ 389), «Այսօր, հարկավ, Բուլղարիայում պավլիկյաններ գոյություն չունեն, նրանք վերջնականապես **բուլղարացած են**» («Լրաբեր» հաս. գիտ., 1998, N 3, էջ 16), «**Արաբացած** եւ **ասորացած** կրօնափոխ եւ քրիստոնեայ հայերը» («21-րդ ԴԱԲ», N 2 (42), 2012), «Մի կողմից՝ Օսմանեան թուրքը եւ միւս կողմից՝ Թաթարական հորդայի սրի տակ **թաթարացած** ռուսը գերեվարելով հային, նրա մէջ ներարկել են ամենից սուկալին՝ վախը («168 Ժամ», 14.11.2012), «Օր. Տամատեան **Ֆրանսացած** է այլեւ» («Ժամանակ», 6.06.1912), «... **ամերիկացած** հայերի ծայները գողանալու համար խոստանային» («Առավոտ», 24.04.2013), «Իսլամացած, քրտացած, թրքացած, արաբացած, **ալեւիացած** հայերուն կողքին կ'աւելնան **չերքէզացած** հայերը» (<https://horizonweekly.ca/am/81850-2/>, 3.03.2016), «-Հազուագիտ անկարեւորները իսկական կարեւորներ կը դառնան,- ըսաւ **հնդկացած** հայ կուրուն («Ազդակ», 15.01.2019):

Ինչպես ցույց են տալիս վերոբերյալ նախադասությունները, հարակատարի ձևերը հիմնականում կապակցվում են **հայ** բառին (առավելաբար՝ դրա հոգնակիին), կամ դրանց գործածությունն առնչվում է հայերին, ինչպես՝ **ռուսացած հայ, թուրքացած հայ, քրդացած հայ**: Անշուշտ, կա նաև հակառակը՝ **հայացած քուրդ** և այլն:

Երբեմն ազգային ինքնության փոփոխության նշանակիչ միևնույն բայը կարող է վերաբերել ինչպես հայերին, այնպես էլ ոչ հայերին: Հմմտ. «Ալ Ռաքքայում, որտեղ մեծ թվով **արաբացած հայեր** են ապրում, ընդամենը մեկ հայկական եկեղեցի կա» («Հայ գինվոր», 24-30.11.2011) և «Արաբական ցեղերի զանգվածային վերաբնակության հետևանքով [Լիբիայի] բնիկներն աստիճանաբար **արաբացան**» («Հայկական սովետական հանրագիտարան», հատ. 4, Եր., 1978, էջ 608):

Հետաքրքրություն է ներկայացնում ազգային ինքնության փոփոխության մի աստիճան նշող «**շուռ տված հայ**» բառակապակցությունը, որը ցույց է տալիս հայաստանյան հանրության որոշ շրջանակների վերաբերմունքը հատկապես հայրենիքից դուրս ապրող այն հայերի նկատմամբ, որոնք հաճախ ցուցադրաբար հրաժարվում էին հայկական ավանդույթներից, խոսում էին ռուսերեն կամ ռուսերենախառն հայերեն, իրենց հայկական ազգանունների **-յան** վերջածանցը փոխարինում էին օտար մասնիկներով և այլն⁴⁵: Օրինակ՝ «Եթե նրան ասես, թե մեր մոտավոր ու հեռավոր հարևաններն էլ ունեցել են այդ ամենը կամ այդ ամենից շատ ավելին, չի՛ հավատա կամ քեզ կհամարի, ինչպես հիմա ասում են

⁴⁵ Մյուս կողմից էլ սա ունենք՝ «Կրոնափոխ հայերին թուրքերը **շուռ տված հայ**» են կոչում»/ www.panorama.am/am/news/2009/11/18/armenians/1186096, (մուտք՝ 21.08.2018):

«**շուռ տված հայ**»» (Պ. Սևակ, «Ազգային սնապարծություն և ազգային արժանապատվություն»): Դիտարկենք այս խոսքաշարը, որտեղ «**շուռ տված հայ**»-ը հումորով գործածվել է սեփական անձի նկատմամբ. «Երիտասարդը մոտեցավ ինձ ու կոտորված հայերենով հարցրեց. հա՛յ ես: Պատասխանեցի՝ հայ եմ: Ծիծաղելով ասաց՝ ես էլ **շուռ տված հայ** եմ: Այդպես ծանոթացանք: Նա Փարաջանովն էր» (<https://kinoashkharh.am/2015/01/>, մուտք՝ 14.10.2018):

Հարակատարի որոշ ձևեր գործածվում են նաև ոչ ազգային ինքնության փոփոխության իմաստով, այլ ուրիշ՝ փոխաբերական նշանակությամբ: Հմմտ. **մոնղոլացած** բառաձևը այս նախադասություններում. բուն իմաստով «մոնղոլ դարձած». «Հայերը իրանց կողքին նստած են տեսնում իրանցից մի քանի անգամ ատելի մեծ թուփ մոնղոլներ և **մոնղոլացած** հայեր» («Արարատ», 1909, դեկտեմբեր, էջ 951), և դիպվածային իմաստով «աչքերը նեղ բացած, կիսաբացած, շեղաչքի նման». «Բժշկուհին ուռած աչքին սառը թրջոցներ էր դնում: Կարճ բացատրեց՝ մեղու, պատուհանը, բզզոց: Եվ **մոնղոլացած** աչքով նայեց նրան» (Զ. Խալափյան, «Որտե՞ղ էիր, մարդ աստծո», ըստ ԱՐԵՎԱԿ-ի⁴⁶):

Հանդիպում են **ադրբեջանանալ** բայի տարբեր կիրառություններ՝ ա) հարակատար դերբայ, երբ ազգային ինքնության փոփոխությունն ավարտված է. «Պարզ էր, որ հայ-ադրբեջանական առաջին իսկ բախման դեպքում Բաքվի հայերը թիրախ կդառնան **ադրբեջանացած** կովկասյան թաթարների ժառանգների համար» (http://hayq.blogspot.com/2008/01/blog-post_16.html, մուտք՝ 11.02.2019), բ) ենթակայական դերբայ, երբ ընթացքի մեջ է. «Բաքվում կարծում են՝ **ադրբեջանացող** Դերբենդի զավթումը զուտ ժամանակի հարց է» («Հայ զինվոր», 7-13.08.2014):

Հետաքրքրական է, որ **ադրբեջանացած**-ը գործածվում է նաև հայկական (Հայաստանի Հանրապետության և Արցախի) այն տարածքների առնչությամբ, որոնց հայ բնակչությունը դուրս է մղվել և փոխարինվել ադրբեջանցիներով: Օրինակ՝ «Հոգը չէ, որ մեր Զանգեզուրը քառասուն տոկոսով **ադրբեջանացած** է»⁴⁷ (Է. Հովհաննիսյան, Հոդվածների ժողովածու, Մյունխեն, 2009, էջ 96):

Երբեմն միևնույն խոսքաշարում գործածված են լինում ազգային ինքնության փոփոխություն ցույց տվող այլ բայեր ևս, այդ թվում **հայանալ**-ը: Այսպես՝ «Տեսա՛ ինչ է տեղի ունենում, Հայաստանն ու Սփյուռքը կապելով, ինչքան դարձ է տեղի ունենում լրիվ օտարացած՝ **գերմանացած, ռուսացած, անգլիացած** հայ էրեխեքը ոնց են դառնում հայ, ոնց են կապվում էս երկրին... Տարեկան 800-1000 մարդ պարզապես **հայանում է**» («Առավոտ», 06.06.2018): Ակնհայտ է, որ խոսողը **անգ-**

⁴⁶ Արևելահայերենի ազգային կորպուս (www.eanc.net):
⁴⁷ Հարակատար դերբայը գործածվում է որպես ա) որոշիչ և բ) ստորոգելիական վերադիր (տես **Աբրահամյան Ս. Գ.**, ժամանակակից հայերենի քերականություն, Եր., 1975, էջ 147):

լիացած ձևը կազմել է հայերեն մյուս բայերի, իր մտքում գոյություն ունեցող բառակազմական կաղապարի հիման վրա, համաբանության օրենքով:

Նույն կերպ էլ հայերեն խոսողը կամ գրողը գործածել է գոյություն ունեցող կաղապարի հիման վրա կազմված վերածման որևէ բայ՝ անգամ չենթադրելով, որ հնարավոր է այդ պահին ինքն է այն ստեղծում: Օրինակ՝ **թաթարացած**-ն այս խոսքաշարում. «Միայն թե երկիրն էլ խեղված, ողորմելի մազապուրծ, **թաթարացած, թուրքացած, պարսկացած, ռուսացած**, բայց չի մեռել, քարշ է եկել... («Չորրորդ իշխանություն», 26.02.2011):

Որոշակի դեր կարող է ունենալ թարգմանությունը: Օրինակ՝ «Նահանգներն **խսպանացած**» բառակապակցությունը (Շառլ դը Կոստեր, «Ուլենշպիգելի և Լամմե Գուդգակի լեգենդը», գիրք երրորդ, մաս V, թարգմանությունը ֆրանսերենից՝ Վ. Միքայելյանի):

Վերածման այս բայերից գոյություն ունեցողների նմանությամբ անհրաժեշտաբար կարող են կազմվել բայանուն գոյականներ: Ազգային ինքնության փոփոխության կամ վերածման իմաստ արտահայտող բայանուններ կարող են կազմվել՝ անտեսելով բայական բառույթի գոյության կամ չգոյության հանգամանքը: Այսպես, օրինակ՝ «Այդ փաստաթղթում շեշտը դրված էր **«ուկրաինացումը** ճիշտ ուղիով անցկացնելու» հարցերին» («Առավոտ», 25.11.2017): Ելակետային ձևով չվկայված **ուկրաինանալ** բայի խոնարհված միայն մեկ ձև հանդիպել է մեզ, սակայն չակերտները հուշում են, որ բայաձևը դիպվածային է. «Բահմանյան անունը հետագայում **«ուկրաինացել է»** և ընդունել տարբեր ձևեր՝ Բահմատյուկ, Բահմետյուկ, Բահմիցկի, Բահմինսկի» («Պատմա-բանասիրական հանդես», 1986, N 3, էջ 33): Բայն այստեղ ազգային ինքնության փոփոխություն չի նշանակում, սակայն այլ խոսքաշարում դա միանգամայն հնարավոր է:

Անշուշտ կան դիպվածային այլ բառեր ևս, ինչպես՝ «Չէ, **«չինացած**-շանհայացած» Ս.Պ.-ի մասին չէ խոսքը» («Իրատես», 02.06.2013):

Այսպիսով՝ վերածման այս տեսակի բայերի շրջանը փակ չէ, այն ըստ անհրաժեշտության կարող է ընդարձակվել. բառակազմական կաղապարի միջոցով կարող են ստեղծվել այլ բայեր: Հնարավոր են, օրինակ, **թուրքմենանալ, շոտլանդանալ, մոլդավանալ** և նման այլ կազմություններ, հատկապես՝ դրանց հարակատարի ձևերը: Եվ, անշուշտ, պարտադիր չէ, որ նորակազմությունները կապված լինեն հայության և հայ կյանքի հետ:

5. Հայանալ

Հայերենի զարգացման գրաբարյան փուլում **հայանալ** բայ չի վկայվել. այն չկա գրաբարի որևէ բառարանում: Նոր շրջանի կազմություն է (ի դեպ, **հայ** բա-

ղաղրիչով մեծաթիվ կազմությունների մեջ բայերը հատուկենտ են. հմմտ. **հայաթափ(վ)ել**, հզվդ. **հայագործել**):

Հայանալ բայի առաջին վկայությունները 19-րդ դարի կեսերից են: Գործածել են դասականները: Այսպես.

«Այդ ի՞նչ բան է, երևի գժվել է մելիքը, կրկին **հայանալ** է ցանկանում...»: Այն օրից, որ մելիքը ընդունել էր մահմեդականություն, դեռ ոչ մի քահանայի ոտք չէր կոխել նրա տան շենքը, իսկ այսօր հրավիրում էր նրան խաչով և Ավետարանով» (Րաֆֆի, «Դավիթ Բեկ»)՝⁴⁸:

- Ես Աբարանու ժամում, իմ տեր Մելիք Մնոյի, յուր կնոջ ու աղջկա աչքի առաջին կուզեմ **հայանալ** (Պ. Պոռոջյան, «Եգիպտի Մկրտիչենց տունը»)՝⁴⁹:

«Որքան էլ ցանկանամ նորից **հայանալ**, հայ լեզու սիրել, հայ կյանքով ապրել, այսուամենայնիվ անկարող եմ» (Մուրացյան, «Ինչ լայել է...»)՝⁵⁰:

«Գուցե դրանով էլ մեր մանուկներին մի բանով օգնած լինենք – **հայանալու** և մարդանալու» (Հովհ. Թումանյանի նամակը Փիլիպոս Վարդազարյանին, 19.04.1915)՝⁵¹:

Բառարանային առաջին գրանցումները եղել են շատ ավելի ուշ տասնամյակներ անց, այն էլ հայերենի թարգմանական բառարաններում: Արևելահայ իրականության մեջ **հայանալ**-ը գլխաբառ է դարձել 1911 թ. Հ. Դադբաշյանի հայ-ռուսերեն բառարանում. թարգմանվել է *объармяниться*, կա նաև բայի պատճառականը՝ **հայացնել** - *объармянить*՝⁵²:

Արևմտահայ իրականության մեջ բառի առաջին արձանագրումը եղել է 1915 թ. Գ. Լուսինյանի և Կ. Հ. Բասմաջյանի հայ-ֆրանսերեն բառարանում. թարգմանվել է *s'arméniser, devenir arménien*՝⁵³:

Միալեզվյան բառարաններից առաջինը **հայանալ**-ն արձանագրվել է Ստ. Մալխասյանցի բառարանում և օրինակ դարձել բացատրական հետագա բառարանների համար: Ըստ Մալխասյանցի՝ **հայանալ**-ը բազմիմաստ է: Առաջին իմաստը՝ «հայ դառնալ, հայ լեզու՝ սովորություններն ընդունել»՝⁵⁴: Բառիմաստի առաջին բաղադրիչը՝ «հայ դառնալ», վերածության նշանակության ցուցիչն է: «Իտալուիի է, բայց Երևանում երկար ժամանակ ապրելով բոլորովին հայացել է» ինքնահնար նախադասությունը վերաբերում է ձևակերպված իմաստի երկրորդ բաղադրիչին, որտեղ խոսքն ազգային ինքնության փոփոխության մասին չէ, այլ հայերեն խոսել կարողանալու և հայկական սովորություններն ընդունելու: Երկրորդ իմաստը ռճական

⁴⁸ Տե՛ս **Րաֆֆի**, Երկերի ժողովածու, հատ. 7, Եր., 1985, էջ 469:
⁴⁹ Տե՛ս **Պոռոջյան Պ.**, Երկերի ժողովածու, հատ. 6, Եր., 1964, էջ 394:
⁵⁰ Տե՛ս **Մուրացյան**, Երկերի ժողովածու, հատ. 2, Եր., 1961, էջ 95:
⁵¹ Տե՛ս **Թումանյան Հովհ.**, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 10, Եր., 1999, էջ 224:
⁵² Տե՛ս **Դադբաշյան Յ.**, նշվ. բառարանը, էջ 425:
⁵³ Տե՛ս **Լուսինյան Գ., Բասմաջյան Կ. Հ.**, Արձեռն բառարան հայերեն այլալեզվի լեզու ֆրանսերեն, Կ. Պոլիս, 1915, էջ 403:
⁵⁴ **Մալխասյանց Ստ.**, Հայերեն բացատրական բառարան, հատ. 3, Եր., 1944, էջ 36:

նշում ունի՝ «կրոն(ական)»՝ «Հայ եկեղեցում մկրտվել, քրիստոնեայ դառնալ»: Ինքնահենար նախադասությունը՝ «Աղջիկն ասաց. Եթե նա կհայանայ՝ նրան կառնեն», լիարժեք դրսևորում է այդ իմաստը:

Ակադեմիական բացատրական բառարանը բայն այսպես է բացատրել՝ «1. Հայ դառնալ (լեզվով, հոգով և սովորություններով): 2. (կրոն.) Հայոց եկեղեցու դավանությունն ընդունելով մկրտվել հայոց եկեղեցում»⁵⁵: Ըստ Էդ. Աղայանի բառարանի՝ **հայանալ**-ը երեք իմաստ ունի, որոնցից մեկը փոխաբերական է համարվել: Այսպես՝ «1. Հայ դառնալ, հայի ազգություն ընդունել: 2. (կրոն.) Հայ եկեղեցում մկրտվել՝ քրիստոնյա դառնալ: 3. Փխբ. Հայի հատկանիշներ ձեռք բերել, բնավորությամբ ու նիստուկացով հայի նմանվել»⁵⁶:

Արևմտահայերենի գործնական բառարանում **հայանալ**-ը բացատրվում է «հայ դառնալ»⁵⁷, երկատորյա բացատրական բառարանը դրան մեկ իմաստ է ավելացնում՝ «Հայ եկեղեցոյ մէջ մկրտուիլ՝ քրիստոնեայ դառնալ»⁵⁸: Ուշագրավ է, որ այստեղ, ի տարբերություն հայաստանյան բառարանների, տրվում են նաև բայի հականիշները՝ «օտարանալ, այլասերիլ»:

Հայանալ բայը գրանցվել է հայերենի այլ բառարաններում ևս: Հոմանիշների բառարանը տալիս է բայի հոմանիշները՝ **հայկանալ, մերազնանալ** (հնգ.)⁵⁹: Նույն հոմանիշներն են տրվում հոմանիշների բացատրական բառարանում, որտեղ բացատրվում է **մերազնանալ**-ը՝ «հայ դառնալ, հայի ազգությունն ընդունել»⁶⁰: Ուղղագրական ընդարձակ բառարանում գրանցվել է **հայանալ**-ը⁶¹, սակայն դրան հաջորդող ուղղագրական բառարաններն այն անտեսել են:

Հայերենի միալեզվյան և թարգմանական բառարաններում **հայանալ** բայի հետ երբեմն գրանցվել է նաև դրա պատճառականը, հաճախ՝ նաև դրանից բաղադրված բայանուն գոյականը: Բայի պատճառականը բնականաբար կազմվում է **-ացն**- մասնիկով **հայացնել** (սա նշանակում է ոչ միայն «հայ դարձնել», այլև «հայկական դարձնել», ինչպես նաև «հայերեն դարձնել՝ հայերեն թարգմանել» հատկապես արևմտահայերենում), բայանուն գոյականը՝ **-ում** ածանցով՝ **հայացում**:

Հայանալ-ը ներառվել է նաև թարգմանական բառարանների բառացանկում: Այսպես, հայ-ռուսերեն ակադեմիական բառարան՝ **հայանալ** - 1. Обармяниться. 2. (կրոն.) Принять армяно-григорянское вероисповедание (ընդունել հայ-գրիգորյան

⁵⁵ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատ. 3, Եր., 1974, էջ 281:

⁵⁶ Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, էջ 810:

⁵⁷ Անդրանիկ վրդ. Կռանեան, նշվ. բառարանը, էջ 236:

⁵⁸ Գնել արք. Ճիզնէճեան, Փ. Կ. Տօնիկեան, Արտ. Տէր Խաչատուրեան, նշվ. բառարանը, հատ. 1, էջ 1137: Պետրոս վրդ. Ճիզնէճեանի բառարանը **հայանալ** չունի:

⁵⁹ Տե՛ս Սուքիասյան Ա. Մ., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Եր., 1967, էջ 361:

⁶⁰ Սուքիասյան Ա. Մ., Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Եր., 2009, էջ 581:

⁶¹ Տե՛ս Բարսեղյան Հ. Խ., Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, Եր., 1973, էջ 538:

դավանությունը), նաև **հայացնել** - арменизировать⁶², հայ-վրացերեն բառարան՝ ջանժեջձա (գաստմխեբա)⁶³, հայ-ֆրանսերեն բառարան՝ **հայանալ** - s'arméniser, devenir Arménien (հայ դառնալ), նաև **հայացնել** - arméniser, **հայացում** - arménisation⁶⁴, հայերեն-իսպաներեն բառարան՝ **հայանալ** - hacerse armenio (հայ դառնալ), adoptar las costumbres armenias (ընդունել հայկական սովորույթները), նաև **հայացնել** - armenizar, **հայացում** - armenización⁶⁵:

Ի տարբերություն վերածման շատ բայերի, որոնք սահմանափակ կիրառություն ունեն և բայական հարացույցի շատ քիչ ձևերով են հանդիպում, **հայանալ**-ը մասնով, գիտական և գեղարվեստական գրականության ու հրապարակախոսության մեջ գործածվում է դիմավոր և անդեմ տարբեր ձևերով: Այսպես, դիմավոր ձևերից՝ սահմանական եղանակի անկատար անցյալ. «Տեղական ցեղերը, խոսելով հայերեն, աստիճանաբար ֆիզիկապես էլ ծովում էին հայերի հետ, **հայանում էին**, կորցնելով իրենց լեզուն» (Էդ. Աղայան, «Հայ լեզվաբանության պատմություն»)՝⁶⁶, անցյալ կատարյալ. «Երեք սերունդ հետո, ընդունելով քրիստոնեություն և ամուսնանալով միայն հայ իշխանական տների զավակների հետ, ի վերջո **հայացան**» (Ա. Պետրոսյան, «Մոզ քաղաքի կործանումը»), վաղակատար ներկա. «Խեթ քրմերը **հայացել են** և պատրաստ են ծառայելու մեր՝ հայերիս աստվածներին» (Ս. Խանզադյան, «Թագուհին հայոց»), ապակատար ներկա. «Չէի կարծում, որ Հայաստանում **հայանալու են**» («Ազգ», 25.07.2008) և այլն:

Բայի անդեմ ձևերից՝ անկախ դերբայներ, դրանց տարբեր հոլովածներ՝ անորոշ դերբայի ուղղական. «**Հայանալը** էական չէ» («Առավոտ», 05.02.2004), սեռական. «**Հայանալու**, հայ ապրելու գլխավոր բանածևը հայրենիքը տեսնելն է» («168 ժամ», 01.06.2015), գործիական. «Աշակերտները իրենց յաղթանակը իրենց հետ փոխադրեցին իրենց տունները՝ քիչ մը ես **հայանալով**» (<http://asbarez.com/arm/155103/>, մուտք՝ 10.11.2017), ենթակայական. «Այդ միջցեղային լեզուն խոսակցական լեզու էր, դրանով խոսում էին ոչ միայն հայերը, այլ նաև **հայացող** ցեղերը» (Էդ. Աղայան, «Հայ լեզվաբանության պատմություն», ըստ ԱՐԵՎԱԿ-ի), հարակատար. «**Հայացած** հրեաների թիվը մոտ 50 հազար է» («Հայկական ժամանակ», 26.06.2004) և այլն:

Հարակատարի ձևի մեջ հատկանշային իմաստն այնքան ուժեղ է, որ հանդիպում են նաև համեմատական **ավելի հայացած**, **էլ ավելի հայացած** ձևերը:

⁶² Տե՛ս Հայ-ռուսերեն բառարան, Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ, Եր., 1987, էջ 387-388:
⁶³ Տե՛ս Մելիքսեթ-Քել Լ., Հայերեն-վրացերեն բառարան, բառարանը վերամշակեց, լրացրեց և հրատարակության պատրաստեց Մ. Որբաքիճեն, Թբիլիսի, 1996, էջ 178:
⁶⁴ Տե՛ս Բարլեզիզյան Ա. Կ., Հայերեն-ֆրանսերեն բառարան, Եր., 2009, էջ 518:
⁶⁵ Տե՛ս Խ. Յ. Թեթեան, Բառարան հայերէն-սպաներէն, Բուենոս Այրես, 1984, էջ 367:
⁶⁶ Այս և հաջորդող երկու օրինակներն ըստ Արևելահայերենի ազգային կորպուսի (www.eanc.net):

Օրինակ՝ «Հայաստան այցելութեամբ **աւելի հայացած** փոքրիկները մեր համայնքի ապագայ ղեկավարներն են» («Հայրենիք», 22.10.2004):

Հայանալ բայից **վեր(ա)-** նախածանցով կազմվել է **վերահայանալ** բայը, որ նշանակում է «կրկին հայ դառնալ, վերադառնալ հայության»⁶⁷, ինչպես նաև «հայկական՝ հայաբնակ դարձնել», ինքնության գաղափարից տարբեր է: Օրինակներ՝ «Չյաջողեցանք վերանորոգուիլ, վերածնիլ, **վերահայանալ**» (<http://asbarez.com/arm/-128455/>. 23.04.2012), «Ազգային զարթոնք է սկսվել, նրանք ուզում են վերանայել իրենց ինքնությունը, **վերահայանալ**» (<http://nyut.am/?p=39840&l=am>, 12.08.2014), «Ազատագրվել է 1993 թ. աշնանը, **վերահայացել** 1995-ին» («Առավոտ», 26.06.2017): **վերահայանալ**-ը բառարանային գրանցում դեռևս չունի: Այս բայից կազմվել է **վերահայացում** բայանուն գոյականը, որն արձանագրվել է նորաբանությունների բառարանում⁶⁸:

Ինքնության փոփոխություն նշանակող վերածման բայերից մի քանիսն արտահայտում են «այս կամ այն կրոնի՝ դավանանքի հետևորդ դառնալ» իմաստը՝ **խլամանալ, կաթոլիկանալ, հեթանոսանալ, մահմեդականանալ, քրիստոնեանալ**: Հայության առնչությամբ պիտի ասել, որ, որպես կանոն, կրոնական ինքնության փոփոխությանը հաջորդում է ազգային ինքնության փոփոխությունը, կամ դրանք հանդես են գալիս միահյուսված: Հավատափոխությունն ու դավանափոխությունը դյուրացնում են ազգային ինքնության փոխակերպումը:

Եզրակացություններ

1. Ազգային ինքնության փոփոխության նշանակիչ բայեր (երեսուն միավոր) կազմվել են հայերենի զարգացման գրաբարյան շրջանից սկսած մինչև մեր օրերը: Գործածական են թե՛ արևելահայերենում և թե՛ արևմտահայերենում:
2. Վերածության իմաստը վերաբերում է՝ ա) ազգային ինքնությանը, բ) կրոնական ինքնությանը, գ) լեզվին, դ) կենցաղին և սովորույթներին:
3. Ազգային ինքնության փոփոխության նշանակիչ բայերը գերազանցապես առնչվում են հայությանը:
4. Բառակազմական հիմք են դարձել՝
ա) Հայաստանի հարևան և հարակից երկրներում ապրող ազգերի ներկայացուցիչների անունները (**թուրքանալ, պարսկանալ, ռուսանալ, վրացանալ**),

⁶⁷ Բառիմաստի և բառակազմության առումով համեմատելի է ընդգծված բառակապակցությունը՝ «Նրանք հիմնեցին Սյունյաց Օրբեյանների տոհմը, որոնք ընդունեցին հայկական դավանանքը և **վերստին հայացան**» («Հայկական սովետական հանրագիտարան», հատ. 7, Եր., 1981, էջ 193):

⁶⁸ Տե՛ս **Էդյան Ս.**, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Եր., 2002, էջ 437:

բ) այն ազգերի անունները, որոնց երկրներում հայկական գաղութներ են եղել կամ կան (**լեհանալ, ռումինանալ, հունգարանալ, ամերիկանալ** և այլն),

գ) **հայ** ինքնանվանումը (**հայանալ**),

դ) կրոնի, դավանանքի և դրանց հետևորդների անունները (**քրիստոնեանալ, իսլամանալ, կաթոլիկանալ**):

5. Ինքնության փոփոխության նշանակիչ բայերը մենիմաստ են (**լեհանալ, քրդանալ, արաբանալ** և այլն) և բազմիմաստ (**հայանալ, պարսկանալ**՝ երկու իմաստ, **թուրքանալ**՝ հինգ-վեց իմաստ և այլն):

6. Վերածնունդի որոշ բայեր ունեն տարբերակներ՝ **թուրքանալ – թրքանալ** (առավելաբար արևմտահայերեն) – **տաճկանալ, վրացանալ – վրացիանալ, ռուսանալ – բրբ.-ժող. ռսանալ**:

7. Հայերենի միալեզվյան և թարգմանական բառարաններում իբրև գլխաբառ արձանագրվել են ազգային ինքնության փոփոխության նշանակիչ **գերմանանալ, թ(ու)րքանալ, իտալացնել, լեհանալ, հայանալ, հրեանալ, հունանալ, պարթևանալ, պարսկանալ, ռուսանալ, վրացանալ, տաճկանալ, քրդանալ** բայերը, ամենից շատ՝ **հայանալ**-ը: Բազմաթիվ բայեր տակավին բառարանագրված չեն՝ **անգլիանալ, ասորանալ, արաբանալ, բուլղարանալ, հնդկանալ, հունգարանալ, չերքեզանալ** և այլն:

8. **Հայանալ** բայը գործածվում է դիմավոր և անդեմ տարբեր ձևերով, այնինչ ինքնության փոփոխության նշանակիչ բայերի զգալի մասը սահմանափակ կիրառություն ունի կամ գործածվում է միայն հարակատարով:

Դավիթ Ս. Գյուրջինյան - գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայոց լեզվի բառակազմությունը և բառակազմական իմաստաբանությունը, բառապաշարը, բառարանագրությունը և բառարանագիտությունը, խոսքարվեստը, արդի հայերենի ուսուցման հարցերը: Շուրջ 150 գիտական, ուսումնական և մեթոդական գրքերի, հոդվածների, աշխատանքների հեղինակ (համահեղինակ) է:

THE VERBS OF THE ARMENIAN LANGUAGE MEANING CHANGE OF NATIONAL IDENTITY

Davit S. Gyurjinyan

Keywords - identity, change of identity, transformation of ethnic identity, change of ethnic identity, verbs of transformation, **հայանալ** “1. become an Armenian, 2. adopt the Armenian-Gregorian faith”, **թուրքանալ** “1. become a Turk, 2. get furious”, **ռուսանալ** “become a Russian”, occasional words, change of religious identity, **քրիստոնեանալ** “adopt Christianity, become a Christian”, **կաթոլիկանալ** “accept Catholic confession, become a Catholic”, **իսլամանալ** “adopt Islam”.

In the old Armenian language, only three verbs were formed, meaning the transformation of ethnic identity: **հրեանալ**, **պարթևանալ**, **պարսկանալ** (“become a Jew, become a Parthian, become a Persian, accept their customs, language and faith”). In subsequent periods of the development of the Armenian language (and today too) 30 verbs were formed, uniting in the lexical-semantic subgroup of the verbs of transformation.

The semantic component of transformation refers to: a) national identity, b) religious identity, c) language, d) customs:

The word-formation basis of the verbs became: a) the names of representatives of neighboring countries or countries attached to Armenia (**ռուսանալ**, **վրացանալ**), b) the names of those nations and countries in which there were or are Armenian communities (**լեհանալ**, **ռումինանալ**), c) self-naming of Armenians - **հայ** (**հայանալ**), d) the names of religions, faiths and their followers (**քրիստոնեանալ**, **իսլամանալ**, **կաթոլիկանալ**).

The studied verbs mostly have one meaning, but there are also some that have multiple meanings: (**թուրքանալ** “1. become a Turk, 2. get furious”, etc.).

Most of the dictionaries have the verb **հայանալ** recorded “1. become an Armenian, 2. (rel.) adopt the Armenian-Gregorian faith”, however, many lexical units of this lexico-semantic group are not yet registered in the dictionaries. Verbs of ethnic transformation are of limited use, some are very rare, even in a single participial form.

ГЛАГОЛЫ АРМЯНСКОГО ЯЗЫКА, ОБОЗНАЧАЮЩИЕ ИЗМЕНЕНИЕ НАЦИОНАЛЬНОЙ ИДЕНТИЧНОСТИ

Давид С. Гюрджинян

Ключевые слова - идентичность, изменение идентичности, трансформация этнической идентичности, изменение этнической идентичности, глаголы превращения, **հալանալ** «1. обармяниться. 2. принять армяно-григорианское вероисповедание», **թուրքանալ** «1. отуречиваться, 2. остервенеть», **ռուսանալ** «обрусеть», окказиональные слова, изменение религиозной идентичности, **քրիստոնեանալ** «принять христианство, стать христианином», **կաթոլիկանալ** «принять католическое вероисповедание, стать католиком», **իսլամանալ** «принять ислам».

В древнеармянском языке было образовано всего три глагола, обозначающих трансформацию этнической идентичности: **հրեանալ**, **սարթևանալ**, **սարսկանալ** («стать евреем / парфянином / персом, принять их обычаи, язык и веру»). В последующие периоды развития армянского языка (и в наши дни тоже) образовались 30 глаголов, объединяющихся в лексико-семантической подгруппе глаголов превращения.

Семантический компонент превращения относится к: а) национальной идентичности, б) религиозной идентичности, в) языку, г) обычаям.

Словообразовательной основой глаголов стали: а) имена представителей соседних, или прилегающих к Армении стран (**ռուսանալ**, **վրացանալ**), б) имена тех народов и стран, в которых были или есть армянские общины (**լեհանալ**, **ռումինանալ**), в) самоназвание армян - **հայ** (**հայանալ**), г) названия религий, вероисповеданий и их последователей (**քրիստոնեանալ**, **իսլամանալ**, **կաթոլիկանալ**).

Изучаемые глаголы в основном однозначные, но встречаются и многозначные (**թուրքանալ** «1. отуречиваться, 2. остервенеть» и т. д.).

Больше всех в словарях зафиксирован глагол **հայանալ** «1. обармяниться. 2. (рел.) принять армяно-григорианское вероисповедание», однако многие лексические единицы данной лексико-семантической группы еще не заре-

гистрированы в словарях. Глаголы этнической трансформации имеют ограниченное употребление, некоторые встречаются очень редко, даже в единичной причастной форме.

REFERENCES

1. **Abeghyan M.**, Hayots' lezvi tesut'yun, Yer., «Mitk'», 1965 **(In Armenian)**.
2. **Abrahamyan A. A.**, Bayë zhamanakakits' hayerenum, vol. 1, Yer., Haykakan SSH gitut'yunneri akademiayi hratarakch'ut'yun, 1962 **(In Armenian)**.
3. **Abrahamyan A. A.**, Hayereni derbaynerë yev nrants' dzevabanakan nshanakut'yunë, Yer., Haykakan SSR GA hratarakch'ut'yun, 1953 **(In Armenian)**.
4. **Abrahamyan L. H.**, Azgayin ink'nut'yan hastatman ch'ors harats'uyts'nerë, «Ink'nut'yan harts'er», Yer., «Zangak-97», 2002 **(In Armenian)**.
5. **Abrahamyan S. G.**, Zhamanakakits' hayereni k'erakanut'yun, Yer., «Luys», 1975 **(In Armenian)**.
6. **Aghayan E. B.**, Ardi hayereni bats'atrankan bařaran, Yer., «Hayastan», 1976 **(In Armenian)**.
7. **Aghayan E. B.**, Zhamanakakits' hayereni holovumë yev khonarhumë (karuts'vatsk'ayin verluts'yun), Yer., Haykakan SSH gitut'yunneri akademiayi hratarakch'ut'yun, 1967 **(In Armenian)**.
8. **Andranik vrd. Křanean**, Bargirk' hayerën lezui, Pëyrut', 1970 **(In Armenian)**.
9. **Ařak'elyan V. D.**, Zhamanakakits' hayereni holovneri yev holovakan kapakts'ut'yunneri imastayin ařunnerë, Yer., Haykakan SSR GA hratarakch'ut'yun, 1957 **(In Armenian)**.
10. **Asatryan M. E.**, Zhamanakakits' hayots' lezvi dzevabanut'yan harts'er, vol. 2, Yer., Yerevani hamalsarani hratarakch'ut'yun, 1973 **(In Armenian)**.
11. **Barlezizyan A. K.**, Hayeren-franseren bařaran, Yer., YePH hratarakch'ut'yun, 2009 **(In Armenian)**.
12. **Barseghyan H. Kh.**, Hayeren ughghagrakan-ughghakhosakan-terminabanakan bařaran, Yer., «Luys», 1973 **(In Armenian)**.
13. **Petros vrd. Chizmëchean**, Hayerën ashkharhabar lezui liakatar bařaran, vol. 2, Halëp, 1957 **(In Armenian)**.
14. **Daghashean Y.**, Liakatar bařaran hayerëmits' ruserën, T'iflis, 1911 **(In Armenian)**.
15. **Eaghubyan K.**, Hayeren-řuseren bařaran, T'iflis, 1891 **(In Armenian)**.
16. **Eloyan S.**, Ardi hayereni norabanut'yunneri bařaran, Yer., «Nairi», 2002 **(In Armenian)**.
17. **Gabriël Awetik'ean, Khach'atur Siwrmëlean, Mkrtich' Awgorean**, Nor bargirk', haykazean lezui, vol. B, Venetik, 1837 **(In Armenian)**.
18. **Galstyan S. A.**, Atsanst'umë yev atsants'nerë zhamanakakits' hayerenum, Yer., Yerevani hamalsarani hratarakch'ut'yun, 1978 **(In Armenian)**.
19. **Gevorgyan E. H.**, Zhamanakakits' hayots' lezvi hamanunneri bařaran, Yer., Yerevani hamalsarani hratarakch'ut'yun, 1978 **(In Armenian)**.
20. **Ghazaryan B. K.**, Zhamanakakits' hayots' lezvi hachkhakanut'yan bařaran, Yer., Haykakan SSH gitut'yunneri akademiayi hratarakch'ut'yun, 1982 **(In Armenian)**.
21. **Ghazaryan R. S., Avetisyan H. M.**, Mijin hayereni bařaran, vol. 2, Yer., Yerevani hamalsarani hratarakch'ut'yun, 1992 **(In Armenian)**.
22. **Guyumchean M. K.**, Ėndardzak bařaran anglierënë hayerën, Pëyrut', 1961 **(In Armenian)**.
23. **Guyumchean M. K.**, Ėndardzak bařaran hayerënë anglerën, Pëyrut', 1950 **(In Armenian)**.

24. **Gnĕl ark' Chĕrĕchean, Tonikean P' K., Art. Tĕr Khachaturean**, Hayots' lezui nor baĕaran, vol. 1-2, Pĕyrut', «Tonikyan yev vordik'», 1992 (**In Armenian**).
25. **Harut'yunyan H. A.**, Karavarumĕ zhamanakakits' hayerenum, Yer., Yerevani hamalsarani hratarakch'ut'yun, 1983 (**In Armenian**).
26. Hay-řuseren baĕaran, Yer., Haykakan SSH GA hratarakch'ut'yun, 1984 (**In Armenian**).
27. Hayots' lezvi barbaĕayin baĕaran, vol. 3, Yer., «Gitut'yun», 2004 (**In Armenian**).
28. **Hovhannisyan M. L.**, Ukrainayi yev Lehastani gaght'ojakhnerĕ, Hay zhoghovrdi patmut'yun, vol. IV, Yer., Haykakan SSH gitut'yunneri akademiayi hratarakch'ut'yun, 1974 (**In Armenian**).
29. **Hovsepyan L.**, Grabari baĕakazmut'yun, Yer., Haykakan SSH gitut'yunneri akademiayi hratarakch'ut'yun, 1987 (**In Armenian**).
30. **Jahukyan G. B.**, Zhamanakakits' hayereni tesut'yan himunk'nerĕ, Yer., Haykakan SSH gitut'yunneri akademiayi hratarakch'ut'yun, 1974 (**In Armenian**).
31. **Khach'atryan G., Azizbekyan T.**, Veratsman bayerĕ mijin grakan hayerenum, «Patma-banasirakan handes», 2019, vol. 1 (**In Armenian**).
32. **Lusinean G., Basmajejan K. Y.**, Arđzerĕn baĕaran hayerĕn ashkharhik lezuĕ franserĕn, K. Polis, 1915 (**In Armenian**).
33. **Malkhasyants' St.**, Hayeren bats'atrankan baĕaran, vol. 1-4. Yer., Haykakan SSR petakan hratarakch'ut'yun, 1944-1945 (**In Armenian**).
34. **Margaryan A. S.**, Hayots' lezvi k'erakanut'yun, Dzevabanut'yun, Yer., YePH hratarakch'ut'yun, 2004 (**In Armenian**).
35. **Mak'sudyan L. S.**, Bayanun goyakanĕ zhamanakakits' hayerenum, Yer., Yerevani hamalsarani hratarakch'ut'yun, 1984 (**In Armenian**).
36. **Melik'set-Bek L.**, Hayeren-vrats'eren baĕaran, veramshakets', lrats'rets' yev hratarakut'yan patrastets' M. Rĕbak'idzen, T'bilisi, «Nerkeri», 1996 (**In Armenian**).
37. **Movsĕs Khorenats'i**, Patmut'iwn Hayots', Yer., Haykakan KhSH GA hratarakch'ut'yun, 1991 (**In Armenian**).
38. **Movses Khorenats'i**, Patmut'yun Hayots', t'argmanut'yunĕ, neratsut'yunĕ yev tsanotagrut'yunnerĕ akad. **St. Malkhasyants'i**, Yer., «Hayastan», 1968 (**In Armenian**).
39. **Movses Khorenats'i**, Patmut'yun Hayots', ashkharhabar t'argmanut'yunĕ, neratsut'yunĕ yev tsanot'agrut'yunnerĕ **St. Malkhasyants'i**, Yer., Yerevani hamalsarani hratarakch'ut'yun, 1981 (**In Armenian**).
40. **Petrosyan S. S.**, «Menk'»-i ink'nanuynut'yan kaĕuts'man vorosh tarrerĕ p'ilisop'ayakan verlutsut'yan p'ordz, «Hayots' ink'nut'yan harts'er», vol. 2, Yer., «Limush», 2014 (**In Armenian**).
41. **Poghosyan P., Mkhit'aryan S.** yev urishner, Hayots' lezvi hangabaĕaran, Yer., Haykakan SSH gitut'yunneri akademiayi hratarakch'ut'yun, 1976 (**In Armenian**).
42. **Suk'iasyan A. M.**, Hayots' lezvi homanishnerĕ baĕaran, Yer., Haykakan SSH gitut'yunneri akademiayi hratarakch'ut'yun, 1967 (**In Armenian**).
43. **Suk'iasyan A. M.**, Hayots' lezvi homanishnerĕ bats'atrankan baĕaran, Yer., Yerevani hamalsarani hratarakch'ut'yun, 2009 (**In Armenian**).
44. **T'ĕk'ĕean Y.**, Baĕaran hayerĕnĕ spanerĕn, Buenos Ayres, «Akian», 1984 (**In Armenian**).
45. **Zĕk'iean L.**, Ink'nut'yan khchankar, Pĕyrut', 2001 (**In Armenian**).
46. **Zĕk'iean P. L.**, Hay ink'nut'iwn, «Ink'nut'yan harts'er», Yer., «Zangak-97», 2002 (**In Armenian**).
47. «Zhamanakakits' hayots' lezvi bats'atrankan baĕaran», vol. 4, Yer., Haykakan SSH gitut'yunneri akademiayi hratarakch'ut'yun, 1980 (**In Armenian**).